



Զահրատ

Սերենատի պէս

Բարի սիրտիի մը նման
մատախտուր թելերուն մէջ է առեր Կիկոն

Երբ ամենուրեք խոնաւ է գիշերանց
խոնաւ կայմերը կամ Կիկոյի յիշատակները
պէտք է բոլոր լամբարները մտերմաբար բարեւել
պէտք է փայփայել Կամուրջին բագրիքները
յետոյ կծկուիլ մատախտուրին ծոցին

Մատախտուր բարի մատախտուր որ թելերուն մէջն է առեր ամէն ինչ
ամէն ինչ կայմերը Կղզիները կամ Կիկոն
բարի սիրտիի մը նման կ'ըսէ
Ի՞նչ բան կայ առելի հաւատարիմ
քան մեծ վիշտ մը առանձնութեան մէջ

Կիկո կ'երագէ
Բարի սիրտիի մը նման
մատախտուր թելերուն մէջ է առեր Կիկոն